# ՎՐԱՍՏԱՆ

«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 5 - 6 (16502) ՇԱԲԱԹ , 21 ՀՈՒՆՎԱՐԻ 2017 Թ., ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ


ԷԿՈՆՈՄԻԿԱ

## ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ ԴԱՎՈՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԻՆ



*Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին հունվարի 19-ին մասնակցեց շվեյցարական Դավոս քաղաքում անցկացվող համաշխարհային ամենամյա տնտեսական գագաթաժողովի աշխատանքին, որն այս տարի անցկացվում է «Պատասխանատու լիդերություն» խորագրով եւ առաջատար թեման «Չորրորդ արդյունաբերական հեղափոխությունն» է: Գագաթաժողովի աշխատանքին մասնակցում են համաշխարհային քաղաքական լիդերներ, այդ թվում եւ Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, ինչպես նաեւ 50 երկրների խոշոր ընկերությունների ու կազմակերպությունների ներկայացուցիչներ:*

Գագաթաժողովի շրջանակներում, Վրաստանի վարչապետը ելույթ ունեցավ «Մետաքսե ճանապարհի» թեմայով անցկացված նստաշրջանում:

Գիորգի Կվիրիկաշվիլին խոսեց մեկնարկած «Մետաքսե ճանապարհի» գլոբալ նախագծի նշանակության, դրա շնորհիվ Եվրոպայի եւ Ասիայի հարմոնիզացման գործընթացում տնտեսական առաջընթացի հեռանկարների մասին: Վարչապետի խոսքով, Վրաստանը գործընկեր երկրների հետ միասին, արդեն ստորագրել է համագործակցության համաձայնագիրը: Նրա խոսքով, արդեն ավարտին է մոտենում այդ նախագծի բաղադրամասը հանդիսացող Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղային նախագիծը, որը կդառնա «Մետաքսե ճանապարհի» Վրաստան-Ադրբեջան-Թուրքիա ճանապարհահատվածի նշանակալի մասը: Իր խոսքում վարչապետը ունկնդիրների ուշադրությունը բեւեռեց նաեւ Անակլիայի մեծ խորության նավահանգստի նշանակության վրա:

Գագաթաժողովի շրջանակներում, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, մասնակից երկրների լիդերների հետ, անցկացրեց մի շարք երկկողմ հանդիպումներ: Հանդիպումներ ունեցան նաեւ խոշոր ընկերությունների ներկայացուցիչների հետ:

ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

## ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ԵՍ ԱԿՏԻՎՈՐԵՆ ԿՆԵՐԳՐԱՎՎԵՄ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆԸ»



*Վրաստանի նախագահի Հավլաբարի նստավայրում աշխատանքն սկսեց Վրաստանում մանուկների բարօրության մարտահրավերների վերաբերյալ միջազգային խորհրդաժողովը: Հավաքին ներկա էին Վրաստանի ժողովրդական պաշտպանը, նախարարությունների, դիվանագիտական կորպուսի, ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչները:*

Դիմելով խորհրդաժողովի մասնակիցներին՝ նախագահը շնորհակալություն հայտնեց միջազգային գործընկերներին եւ դոնոր երկրներին, Վրաստանի կառավարությանն ու գերատեսչություններին, որոնք, նախագահի գնահատմամբ, լուրջ քայլեր են կատարում այդ հիմնախնդիրների կարգավորման տեսանկյունից:

- Միաժամանակ, պետք է հաշվի առնել նաեւ այն, որ այդ հիմնախնդիրները մինչեւ վերջ կարգավորված չեն, ավելին՝ դրանք շատ են եւ պահանջում են մեր համակարգված ու ակտիվ միջամտությունը,- հայտարարեց նախագահը եւ պատրաստակամություն հայտնեց մշտապես ակտիվորեն ներգրավվել մանուկների հիմնախնդիրների հաղթահարման գործում:

ԿՐԹԱԿԱՆ



## ԹԻՎ 103 ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԴՊՐՈՑԸ ԲԱՑԵՑ ԻՐ ԴՌՆԵՐԸ

*Հունվարի 16-ին, մայրաքաղաքի «Մետրոշինարարների» թաղամասում, բացվեց թիվ 103 վրաց-հայկական հանրային դպրոցի նոր շենքը: Մեր ընթերցողին հիշեցնենք, որ «Մետրոշինարարների» թաղամասի այդ դպրոցում հայկական բաժանմունքը բացվեց 2010թ., երբ հարեւանությամբ գտնվող հայ-ռուսական թիվ 110 դպրոցը աշակերտների սղության պատճառով փակվեց, իսկ կրթօջախի շենքը փոխանցվեց Աբխազիայից եւ Սամաչաբլոյից փախստականներին: Թիվ 110 դպրոցի աշակերտները ներառվեցին 50 մետր հեռավորությամբ գործող թիվ 103 դպրոցում, որ կոչվեց վրաց-հայկական: Այդ դպրոցում, վթարային վիճակի պատճառով, 2013 թվականի ապրիլից պարապմունքները դադարեցվեցին, եւ դպրոցի աշակերտները տեղափոխվեցին Վազիսուբանիի թիվ 157 կրթօջախի շենք: Թիվ 103 դպրոցի վթարային շենքը քանդեցին, եւ սկսվեց նոր դպրոցական շենքի շինարարությունը:*



3,5 տարում Վրաստանի ամենաժամանակակից եվրոպական չափանիշներին համապատասխան եռահարկ շենք՝ 1000 աշակետի համար: Նորաշեն դպրոցը հագեցված է նյութատեխնիկական հարուստ բազայով, ունի լուսավոր, միջազգային չափանիշներին համապատասխան, բարեկարգ դասասենյակներ, մարզադահլիճ ու համերգային, խորհրդաժողովների դահլիճներ ու սրահներ, կան վերելակներ եւ ուղեհարթակներ: Այն լրիվությամբ հարմարեցված է նաեւ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների պահանջներին: Ինչպես ընդգծեց Վրաստանի կրթության ու գիտության նախարար Ալեքսանդրե Ջեջելավան, նման լայնածավալ դպրոցական նախագիծ վերջին տասը տարում երկրում չի իրականացվել:

Այդ օրը առավոտից մարդաշատ էր կրթօջախի բակը, բարձր եւ ուրախ տրամադրությունն էր համակել դպրոցականներին, մանկավարժներին ու ծնողներին: Հանդիսավոր արարողությանը մասնակցելու համար, դպրոց էին այցելել պատվարժան հյուրեր՝ Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, կրթության եւ գիտության նախարար Ալեքսանդրե Ջեջելավան, սպորտի եւ երիտասարդության հարցերով նախարար Տարիել Խեչիկաշվիլին, կրթության նախարարի տեղակալ Լիա Գիգաուրին, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, Իվ.Ջավախիշվիլու անվան պետհամալսարանի

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՈՒՄ

## ԹԵԱ ԾՈՒԼՈՒԿԻԱՆԻ. «ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆԸ ՆՇԱՆԱԿԱԼԻ ԱՎԱՆԴ ՈՒՆԵՑԱՎ ԱՍՈՑԻԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ»



*Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին ներկայացրեց գերատեսչության չորսամյա գործունեության հաշվետվությունը: Միջոցառմանը, որն անցկացվեց Վրաստանի ազգային արխիվի ցուցատաղավարում, ներկա էր Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին:*

Թեա Ծուլուկիանին խոսեց արդարադատության նախարարության գործունեության հիմնական ուղղությունների մասին, առանձնակի ընդգծեց նախարարության եւ նրա ծառայությունների նշանակալից դերը Եվրամիության հետ Ասոցիացման համաձայնագրի ձեւակերպման եւ այցեգրերի ազատականացման գործողության ծրագրով նախատեսված պարտավորությունների կատարման գործում, ուշադրությունը բեւեռվեց Վրաստանում

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

## ՔԵԹԵՎԱՆ ՑԻԽԵԼԱՇՎԻԼԻ. «ԵՐԿՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ ՄԵՐ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՆԴԻՐՆ Է»

*Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Քեթեւան Ցիխելաշվիլին հանրագումարեց 2016 թվականին կատարած աշխատանքի արդյունքները:*



- Մենք շարունակում ենք խաղաղասիրական քաղաքականությունը: Վրաստանի կառավարությունն ունի ծրագիր՝ է՛լ ավելի ու դինամիկ քայլեր իրականացնելու խաղաղարար գործընթացում, հակամարտությամբ միմյանցից հեռացած հասարակությունների մերձեցման, ժողովուրդների միջեւ հարաբերությունների խրախուսման ուղղությամբ: Երկրի միավորումը մեր գերագույն խնդիրն է, նախ՝ մեր ժողովրդի միավորումը, եւ ապա՝ եվրոպական պետության շինարարությունը: Մեր ապագան եվրոպական Վրաստանն է: Մենք գործնական քայլեր

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ԻՍՊԱՆԻԱ

# ՎՐԱՍՏԱՆԸ՝ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ՄԱՍՆԱԿԻՑ

## ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻՆ ՀԱՆԴԻՊԵԾ ԻՍՊԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐ ՖԻԼԻՊ ՉՈՐՐՈՐԴԻ ՀԵՏ

***Դավոսի տնտեսական գագաթաժողովի ավարտից հետո, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին մեկնեց Մադրիդ, որտեղ մասնակցեց զբոսաշրջության միջազգային ցուցահանդեսում Վրաստանի տաղավարի բացման հանդիսությանը, որին ներկա էին Իսպանիայի թագավոր Ֆիլիպ Չորրորդը եւ թագուհի Լետիցիան, պաշտոնական այլ անձինք:***



Իսպանիա կատարած այցի շրջանակներում, Վրաստանի վարչապետն առանձնազրույց ունեցավ Իսպանիայի թագավոր Ֆիլիպ Չորրորդի, երկրի վարչապետ Մարիանո Ռախոյի հետ:

Ֆիլիպ Չորրորդի հետ հանդիպմանը, Վրաստանի վարչապետը Իսպանիայի թագավորին հրավիրեց մասնակցելու Վրաստանի եկեղեցու ինքնության վերականգնման 100-ամյակին եւ Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարքի գահակալության ու ծննդյան հոբելյանական արարողություններին նվիրված միջոցառումներին:

Հանդիպմանը կողմերն ուշադրություն բեւեռեցին զբոսաշրջության ինդուստրիայի՝ որպես սոցիալ-տնտեսական սեկտորի զարգացման հարցերի վրա: Հանդիպմանը վարչապետը խոսեց Վրաստանի զբոսաշրջության զարգացման հեռանկարների մասին՝ նշելով, որ միայն 2016 թվականին երկիր է այցելել 6,4 միլիոն միջազգային զբոսաշրջիկ, որից երկիրը միայն այդ ուղղությամբ ստացել է 2 միլիարդ ԱՄՆ դոլարի եկամուտ:

Հանդիպումը, որն անցկացվեց Իսպանիայի թագավորական «Էլ Պարդո» պալատում, ներկա էր նաեւ ՄԱԿ-ի զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության գլխավոր քարտուղար Տալեբ Ռիֆայը:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

# ՆԵՐԿԱՅԱՑՎՈՒՄ Է ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՀԱՐԿԱԴՐՄԱՆ ՆՈՐ ԿԱՐԳԸ

შემოსავლების სამსახური

***Հունվարի 11-ից, շահութահարկի հարկադրման նոր կարգի կապակցությամբ, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայությունը հարկատուների համար սկսեց «Բաց դռների օր» միջոցառումը:***

Վերոնշյալ ձեւաչափում եկամուտների ծառայության ներկայացուցիչները հարկատուներին տեղեկատվություն են ներկայացնում հարկադրման նոր կարգավորումների մասին, նաեւ հարց-պատասխանի կարգով պատասխանում հետաքրքրվող հարցերին:

Ծառայության կողմից «Բաց դռների օրը» անցկացվելու է ինչպես Թբիլիսիում, այնպես էլ՝ Թելավիում, Ռուսթավիում, Գորիում, Ախալցիխեում, Քութայիսիում, Բաթումիում, Զուգդիդիում, Օզուրգեթիում, Փոթիում, Մառնեուլիում եւ Ձեստափոնիում: Միջոցառումը կշարունակվի մինչեւ հունվարի 31-ը ներառյալ:

«Բաց դռների օրվա» անցկացման օրակարգի մասին մանրամասն տեղեկատվություն հնարավոր է ստանալ եկամուտների ծառայության պաշտոնական www.rs.ge կայք-էջում:

Հիշեցնենք, որ շահութահարկի հարկադրման նոր կարգը, այսպես կոչված, շահութահարկի մասնատման կարգը, որն առնչվում է առանձին անձանց, ուժի մեջ է մտել 2017 թվականի հունվարի 1-ից:

***ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ***

ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՈՒՄ

# ԹԵԱ ԾՈՒԼՈՒԿԻԱՆԻ. «ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆԸ ՆՇԱՆԱԿԱԼԻ ԱՎԱՆԴ ՈՒՆԵՑԱՎ ԱՍՈՑԻԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ժողովրդավարական ինստիտուտների շինարարության գործում գերատեսչության ավանդի, նախարարության ղեկավարությամբ իրականացված օրենսդրական բարեփոխումների վրա:

Նախարարը միաժամանակ ներկայացրեց նաեւ գերատեսչության ենթակայության ներքո գործող ՀԻԻԱ-ների քառամյա գործունեությունը:

Նախարարության քառամյա գործունեության հաշվետվության միջոցառմանը ներկա էին գործադիր, օրենսդրական եւ դատական իշխանությունների անդամներ, Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի եւ միջազգային առաքելությունների ներկայացուցիչներ:

# ՔԵԹԵՎԱՆ ՑԻԽԵԼԱՇՎԻԼԻ. «ԵՐԿՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ ՄԵՐ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՆԴԻՐՆ Է»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ենք կատարում, որպեսզի Աբխազիայի եւ Ցխինվալիի տարածաշրջանի բնակիչները ստանան այն օգուտը, ինչը մատչելի կդառնա Վրաստանի մյուս քաղաքացիների համար՝ ելնելով Վրաստան-Եվրամիություն համագործակցության ձեւաչափերից,- հայտարարեց Քեթեւան Ցիխելաշվիլին:

Անդրադառնալով քաղաքացիական ինտեգրման հարցերին՝ նա խոսեց իրավահավասարության եւ ինտեգրման նոր չափորոշիչների շրջանակներում իրականացված աշխատանքի մասին:

- Շատ նորամուծություններ են ներդրվել, առանձնապես շեշտը դրվում է մայրենի լեզվով որակյալ կրթության ստացման վրա: Պետության առաջնահերթությունը եղել եւ առաջիկայում կմնա պետական լեզվի ուսուցման համար համապատասխան պայմանների ստեղծումը: Ընդհանրապես, մեր քաղաքականության գլխավոր ուղղությունն այն է, որ պահպանվի յուրաքանչյուր քաղաքացու իրավունքները, պահպանվի նրա ինքնությունը,- հայտարարեց Քեթեւան Ցիխելաշվիլին:

ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

# ՎՐԱՑ - ՀԱՅԿԱԿԱՆ ԶՈՐԱՎԱՐԺԱՆՔՆԵՐ ՍԱՉԽԵՐԵՈՒՄ



***Սաչխերեի (Իմերեթիի տարածաշրջան) ռազմական ուսուցման դպրոցում, վրաց զինծառայողների ու հայ զինվորականների մասնակցությամբ, մեկնարկել են 25-օրյա վարժանքներ: Այդ մասին հայտնել է Վրաստանի պաշտպանության նախարարության մամուլի ծառայությունը:***

Հայ զինվորականների մասնակցության վերաբերյալ որոշումն ընդունվել է Հայաստանի պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի՝ անցյալ տարվա դեկտեմբերին Թբիլիսի կատարած այցի ընթացքում: Վրաց եւ հայ զինվորականներից բացի, վարժանքներին մասնակցում են Լիտվայից եւ Ֆրանսիայից ժամանած զինծառայողներ՝ ընդամենը 14 մարդ:

Ձմեռային վարժանքները բաղկացած են երկու փուլից: Նախ, զինվորականները ցուցակային զենքից հրաձգության մարտավարությունը կբարելավեն Օրփոլոյի զորափորձարանի լեռնային տեղանքում: Վարժանքների երկրորդ փուլը զինվորականների ուղեւորություն է նախատեսում Գուդաուրիի լեռնադահուկային առողջարան, որտեղ նրանց համար ծրագրված են դահուկավազք, ապաստարանի պատրաստում, ձնահյուսի հետեւանքով տուժած մարդկանց որոնումներ ու տարհանում: Դասընթացի ավարտից հետո, զինծառայողները կստանան վկայականներ ու կրծքանշաններ:

Սաչխերեի ռազմական ուսուցման դպրոցը հիմնադրվել է 2004 թվականին: 2010 թվականին, ՆԱՏՕ-ի Հյուսիսատլանտյան խորհրդի որոշմամբ, դպրոցին տրվել է ՆԱՏՕ-ի կրթության ու պատրաստության կենտրոնի կարգավիճակ՝ «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում:



ԱՄՆ

# ԴՈՆԱԼԴ ԹՐԱՄՓԸ ՍՏԱՆՁՆԵՑ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԸ



*Հունվարի 20-ին Դոնալդ Թրամփը ստանձնեց ԱՄՆ նախագահի պաշտոնը: Թրամփը երդման տեքստն արտասանեց՝ ձեռքը դնելով Աստվածաշնչի վրա:*

*ԱՄՆ 45-րդ նախագահի երդմնակալության պաշտոնական արարողությունը տեղի ունեցավ ԱՄՆ Կոնգրեսի շենքի դիմաց:*

*Երդման արարողության ներկա էր գրեթե ողջ ամերիկյան քաղաքական էլիտան: Մի շարք դեմոկրատ սենատորներ ու կոնգրեսականներ հրաժարվել էին մասնակցել Թրամփի երդմնակալության արարողությանը: Ներկա էին եւ ԱՄՆ նախկին նախագահներ Ջիմի Քարթերը, Բիլ Քլինթոնը, Ջորջ Բուշ կրտսերը, գործող նախագահ Բարաք Օբաման՝ կանանց հետ: Բիլ Քլինթոնին ուղեկցում էր ընտրություններում պարտված դեմոկրատ թեկնածու Հիլարի Քլինթոնը: Ջորջ Բուշ ավագը առողջական խնդիրների պատճառով ներկա չի գտնվել արարողությանը:*

*Նոյեմբերի 8-ին, ԱՄՆ-ում կայացած նախագահական ընտրությունների արդյունքներով, Թրամփը հաղթեց Հիլարի Քլինթոնին:*

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

# ԱՆՏՈՆԻՈ ՏԱՅԱՆԻՆ՝ ԵՎՐԱԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

*Իտալացի Անտոնիո Տայանին, որը ներկայացնում է Եվրոպայի ժողովրդական կուսակցությունը, քվեարկության չորրորդ փուլի արդյունքում ընտրվել է Եվրախորհրդարանի նոր նախագահ:*

*Ինչպես հայտնել է Եվրախորհրդարանի նախորդ նախագահ Մարտին Շուլցը, Տայանիի օգտին տրվել է 351 ձայն, իսկ նրա ընդդիմախոսը՝ իտալացի Ջանի Պիտելան՝ «Սոցիալիստների եւ դեմոկրատների առաջադիմական դաշինք» խմբակցությունից, ստացել է միայն 282 ձայն:*

*Ավելի վաղ, 63-ամյա Տայանին երկու անգամ զբաղեցրել է եվրակոմիսարի պաշտոն՝ Եվրահանձնաժողովում տնօրինելով արդյունաբերության եւ տրանսպորտի զարգացման հարցերը: Իտալիայում նա դարձել է «Հառաջ, Իտալիա» կուսակցության հիմնադիրներից մեկը եւ եղել նախկին վարչապետ Սիլվիո Բեռլուսկոնիի պաշտոնական ներկայացուցիչը:*

ԹՈՒՐՔԻԱ

# ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է ՍՏԱՄԲՈՒԼԻ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԿԱՍԿԱԾՅԱԼԸ

*Թուրքական հատուկ ծառայությունները ձերբակալել են Ամանորի գիշերը Ստամբուլի «Ռեյնա» գիշերային ակումբում ահաբեկչություն իրականացնելու մեջ կասկածվող անձին:*

*Ուզբեկստանի քաղաքացի Աբդուլգադիր Մասհարիփովի հետ ձերբակալվել են նաեւ 3 կին եւ 1 ղրղզ տղամարդ:*

*Հիշեցնենք. 2017 թվականի տարեմուտի գիշերը, «Ռեյնա» ակումբում իրականացված հարձակման հետեւանքով, զոհվել էր 39 մարդ: Կատարվածի պատասխանատվությունը ստանձնել էր «Իսլամական պետություն» ահաբեկչական խմբավորումը:*

# Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

## ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏՆՎԵՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԱՎԱՐՏԻՆ ՀԱՍՑՆԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ




*Հունվարի 20-ին շվեյցարիական Դավոսում, համաշխարհային տնտեսական գագաթաժողովի շրջանակներում Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին հանդիպում ունեցավ Եվրոպայի վերակառուցման եւ զարգացման բանկի նախագահ Սումա Չակրաբարտի հետ:*

Հանդիպմանը կողմերը քննարկեցին Վրաստանում ներդրումների ավելացման, մասնավոր հատվածի խրախուսման եւ բիզնես միջավայրի զարգացման հեռանկարները:

Հանդիպմանը խոսվեց նաեւ Վրաստանի տնտեսական զարգացման գործում վերակառուցման եւ զարգացման բանկի դերի եւ բանկի կողմից իրականացված ներդրումների մասին: Նշվեց, որ 2016 թվականին բանկի կողմից Վրաստանում իրականացվել է ռեկորդային թվով ենթակառույցային նախագծեր, ներդրումների ծավելը գերազանցել է 250 միլիոն եվրոն:

Զրուցակիցների գլխավոր թեմաներից մեկը Վրաստանի կառավարության կողմից ծրագրված բարեփոխումների նախագիծ եւ դրա բաղկացուցիչ մասը կազմող` երկրի կառուցվածքային կարգավորումն էր: Սումա Չակրաբարտին վարչապետին աջակցության պատրաստակամություն հայտնեց իրականացվող բարեփոխումները տրամաբանական ավարտին հասցնելու գործում:

ԱՅՑ

## ԻՍՐԱՅԵԼԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ ՎՐԱՍՏԱՆ

*Վրաստանի նախագահի հրավերով, երկօրյա պաշտոնական այցով, Թբիլիսիում էր գտնվում Իսրայելի նախագահ Ռեուվեն Ռիվլին` տիկնոջ հետ: Այցի շրջանակներում, նա պաշտոնական հանդիպումներ ունեցավ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու, վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու, խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեի հետ:*

Հանդիպումներում ընդգծվեց երկու երկրների միջեւ տարբեր ոլորտներում համագործակցության խորացման եւ ամրապնդման փաստը, առեւտրատնտեսական հարաբերություններում դրական միտումները, քննարկվեցին առաջիկա համագործակցության ծրագրերը:

Այցի երկրորդ օրը, Իսրայելի պաշտոնական պատվիրակությունը` նախագահ Ռեուվեն Ռիվլինի գլխավորությամբ, այցելեց Թբիլիսիում Վրաստանի տարածքային ամբողջականության համար զոհվածների հուշահամալիր եւ հարգանքի տուրք մատուցեց զոհված հերոսների հիշատակին:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

## ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻՑ ՇՈՒՐՋ 10 ԿԼԻՆԻԿԱ ԿՀԱՆՎԻ



Բացառված չէ, որ համընդհանուր առողջանպահության ծրագրից 10 կլինիկաներ դուրս մնան: Այդ մասին Վրաստանի առաջատար կլինիկաների ղեկավարների հետ հանդիպմանը հայտարարեց Վրաստանի առողջապահության,համընդհանուր աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարար Դավիթ Սերգեենկոն: Նրա խոսքով, դա պայմանավորված է առանձին կլինիկաների աշխատանքում բացահայտված թերացումներով:

Ինչպես նշեց առողջապահության նախարարը, եթե կլինիկաները իրենց աշխատանքը համապատասխանեցնեն պետության շահերին եւ կարգավորեն աշխատանքի ոճը, ապա հնարավոր է ծրագրից դուրս մնացող կլինիկաների թիվը նվազի:

Ինչպես տեղեկացրեց Դավիթ Սերգեենկոն, նոր բարեփոխումների հիմնական ուղղությունների իրականացումը կսկսվի փետրվարի սկզբներին:

ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

## «ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄԸ»` ՆՈՐԱՑՎԱԾ ԿԱԶՄՈՎ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇԱԿԻ ՓՈՓՈԽՄԱՄԲ

*Հունվարի 20-ին, Թբիլիսիի մարզապալատում յոթ հազար պատվիրակների մասնակցությամբ անցկացվեց «Միասնական ազգային շարժման» հերթական համագումարը: Դրա մասնակիցներին Վաշինգտոնից, հեռարձակմամբ դիմեց կուսակցության հիմնադիր եւ նախագահ Միխեիլ Սաակաշվիլին:*

Լուրջ պառակտման հետեւանքով նշանակալիորեն վարկազրկված «Ազգայինների» համագումարում պատվիրակները միահամուռ հավանություն տվեցին կուսակցության քաղխորհրդի նորացման առաջարկությանը: Քվեարկության արդյունքներով, կուսակցության քաղաքական խորհրդի նախագահ ընտրվեց Նիկա Մելիան, փոխնախագահներ` Զազա Բիբիլաշվիլին եւ Լեւան Վարշալոմիձեն: Կուսակցության գլխավոր քարտուղարի պաշտոնում վերահաստատվեց Վանո Մերաբիշվիլին:

Համագումարը, բացի վերոնշյալներից, «Ազգային շարժման» քաղխորհրդի անդամներ ընտրեց Ռոման Գոցիրիձեին, Թինաթին Բոկուչավային, Սալոմե Սամադաշվիլուն, Ազեր Սուլեյմանովին, Կոբա Նադոփիային, Գրիգոլ Վաշաձեին, Սամիրա Իսմայիլովին, Դավիթ Բերտիաշվիլուն, Նիկոլոզ Ռուրուային, Գիա Բարամիձեին, Մարիամ Գերսամիային, Իրակլի Նադիրաձեին, Մարիամ Քասրաշվիլուն, Գիորգի Բոտկովելուն, Էկա Ծամալաշվիլուն, Աննա Ծիթլաձեին, Վանո Պետրիաշվիլուն, Բեսո Քաթամաձեին, Նինո Կալանդաձեին, Դավիթ Կիրկիտաձեին, Զուրաբ Մելիքիշվիլուն, Լեւան Բեժաշվիլուն, Պետրե Ցիսկարիշվիլուն, Նուգզար Ծիկլաուրուն, Գիորգի Կարբելաշվիլուն, Կոբա Սուբելիանուն, Գիորգի Քուբլաշվիլուն, Չիորա Թաքթաքիշվիլուն, ընդամենը 61 հոգու:

Պատվիրակները հավանություն տվեցին կուսակցության կանոնադրության փոփոխություններին: Մասնավորապես, վերացվում են քարտուղարությունները, կուսակցությունը հետեւելու է ֆինանսավորման գլխավոր սկզբունքին` պաշտոնատարներ չեն լինի, կլինեն նախագծեր, որոնք կֆինանսավորվեն կուսակցության բյուջեից: Նաեւ կուսակցության գլխավոր քարտուղարի պարտականությունը, քանի դեռ Վանո Մերաբիշվիլին բանտում է, կիրականացնի քաղխորհրդի նախագահը:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ԳՐԱՆՑՎԱԾ 6939 ԱՎՏՈՎԹԱՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ, ԶՈՀՎԵԼ Է 581 ԵՎ ՎԻՐԱՎՈՐՎԵԼ 9951 ՄԱՐԴ

***2016 թվականին Վրաստանում պաշտոնապես վավերացվել է 6939 ավտոճանապարհային միջադեպ:***

Վրաստանի ՆԳ նախարարության պաշտոնական տվյալներով, վավերացված ավտովթարների արդյունքում զոհվել է 581 եւ մարմնական վնասվածք է ստացել 9951 մարդ: 2015 թվականի համեմատությամբ, վթարների թիվն ավելացել է 7 տոկոսով, սակայն զոհվածների թիվը նվազել է 3 տոկոսով: Մարմնական վնասվածք ստացողների թիվը ավելացել է 8 տոկոսով:

Թբիլիսիում հաշվետու ժամանակահատվածում վավերացվել է 3264 ավտովթար, զոհվել է 98 եւ վիրավորվել` 4173 մարդ:

Ինչ վերաբերում է հետիոտներին, ապա 2016 թվականին պարեկային ոստիկանության գործունեության տարածքում զոհվել է 159 եւ վիրավորվել 2159 մարդ:



### 2016-Ի ՊԵՏԲՅՈՒՋԵՆ ԳԵՐԱԿԱՏԱՐՎԵԼ Է

*Ինչպես տեղեկացրել է Վրաստանի ֆինանսների նախարարությունը, 2016 թվականի Վրաստանի պետական բյուջեի եկամտային հատվածը կատարվել է 100 տոկոսով: Կատարվել են նաեւ բյուջեի ծախսերի եւ կատարման ցուցանիշները:*

*Համակցված բյուջեի եկամուտների ցուցանիշը գերակատարվել է: Ընդ որում, միայն դեկտեմբերին առաջադրանքը գերազանցվել է 46 միլիոն լարիով, իսկ նախնական ծրագրի համաձայն, գերազանցումը կազմել է 101 միլիոն լարի:*

### ՎՐԱՍՏԱՆԻ ԱԳ ՆԱԽԱՐԱՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

*Վրաստանի արտաքին գործերի նախարար Միխեիլ Ջանելիձեն պաշտոնական այցով մեկնեց Թուրքիա:*

*Այցի շրջանակներում, Վրաստանի ԱԳ նախարարը հանդիպում ունեցավ Թուրքիայի պաշտոնատար անձանց հետ: Նա հանդիպեց նաեւ Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հետ: Հանդիպմանը առանձնակի ուշադրություն հատկացվեց երկկողմ բարեկամական ու ռազմավարական հարաբերությունների, տարածաշրջանային տրանսպորտային եւ էներգետիկական ծրագրերի վրա: Ընդգծվեց բարձր մակարդակով փոխայցելությունների դինամիկայի պահպանման ու առաջիկա ակտիվացման անհրաժեշտությունը: Միխեիլ Ջանելիձեն դատապարտեց Թուրքիայում վերջին օրերին տեղի ունեցած ահաբեկչական գործողությունները եւ համերաշխություն հայտնեց Թուրքիայի իշխանություններին ու ժողովրդին:*

### ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ ԵՐԿՐՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԸ

*Հունվարի 20-ին Վրաստանի ժողովրդական պաշտպան Ուչա Նանուաշվիլին հանդիպում ունեցավ երկրի խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբաշիձեի հետ:*

*Հանդիպմանը օմբուդսմենը խորհրդարանի խոսնակին ծանոթացրեց մարդու իրավունքների տեսանկյունից երկրում ստեղծված իրավիճակը: Ուչա Նանուաշվիլին մանրամասն խոսեց ժողովրդական պաշտպանի աշխատակազմի կողմից իրականացված աշխատանքների մասին: Կողմերը քննարկեցին մարդու իրավունքների պաշտպանության ուղղությամբ օմբուդսմենի աշխատակազմի կողմից մշակած հանձնարարականները: Առանձնակի ուշադրություն հատկացվեց «Ժողովրդական պաշտպանի մասին» եւ «Խտրականության բոլոր դրսեւորումների վերացման մասին» օրենքների կատարելագործմանն ու Սահմանադրական հանձնաժողովի աշխատանքին:*

*Իրակլի Կոբախիձեն եւ Ուչա Նանուաշվիլին խոսեցին նաեւ խորհրդարանի եւ օմբուդսմենի աշխատակազմի միջեւ համագործակցության հարցերի մասին:*

### ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ

**(20 հունվարի)**

*Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի հետեւյալ կուրսը:*

| ՏԱՐԱԴՐԱՄ | ԱՌՔ | ՎԱՃԱՌՔ |
|---|---|---|
| ԱՄՆ ԴՈԼԱՐ | 2.650 | 2.710 |
| ԵՎՐՈ | 2.790 | 2.916 |
| ՌՈՒԲԼԻ | 0.041 | 0.048 |
| ԴՐԱՄ | 0.004 | 0.005 |

*Դեկտեմբերի 23-ի համեմատությամբ, դոլարի կուրսը աճել է մոտ 0,025 լարիով:*

ԿՐԹԱԿԱՆ

# ԹԻՎ 103 ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԴՊՐՈՑԸ ԲԱՑԵՑ ԻՐ ԴՌՆԵՐԸ

(Սկիզբը` 1-ին էջում)

նախապատրաստական խմբի վրաց լեզվի դասախոս Զոյա Մխիթարյանը, մայրաքաղաքի թիվ 104 դպրոցի տնօրեն Իրինա Ժամկոչյանը, «Հայարտուն» կենտրոնի տնօրեն Լեւոն Չիդիլյանը, տողերիս հեղինակը, այլոք:

Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Ա.Ջեջելավայի բացման ու շնորհավորանքի խոսքին հաջորդեց վարչապետ Գ.Կվիրիկաշվիլու ելույթը: Նա, կրթության բարեփոխումների շրջանակներում, ներկայացրեց կառավարության նոր նախաձեռնությունը առողջ ապրելակերպի արդիականացման եւ ստանձնած պարտավորության վերաբերյալ, որ յուրաքանչյուր աշակերտ ընդգրկված լինի ֆիզիկական տարբեր ակտիվություններում:





- Ինչպես գիտեք, մեր երեխաները շատ ակտիվ են ժամանակակից տեխնոլոգիաների յուրացման գործընթացում, եւ նրանք այս ուղղությամբ իրավ առաջ են անցել ավագներից: Ես կարծում եմ, որ մեր երեխաներն այսօր միջազգային մասշտաբով լրիվությամբ մրցունակ են ժամանակակից տեխնոլոգիաների յուրացման մեջ: Նոր տեխնոլոգիաների դարաշրջանում է'լ ավելի արդիական է դառնում ֆիզիկական ակտիվությունն ու վարժությունը: Դրա համար էլ, մենք ուզում ենք այսօրվանից յուրաքանչյուր դպրոցի, յուրաքանչյուր երեխայի առաջարկել առողջ ապրելակերպի հաստատում եւ ֆիզիկական ակտիվություն: Մենք, կրթության, սպորտի եւ երիտասարդության հարցերով նախարարությունների, մարզական ֆեդերացիաների հետ, յուրաքանչյուր դպրոցի համար կմշակենք ֆիզիկական ակտիվության ծրագիր, որպեսզի յուրաքանչյուր երեխա ներգրավվի նրանում,- նշեց վարչապետը:

Հավելենք նաեւ, որ 2016-2017 ուստարում դպրոցում սովորում է 650 աշակերտ, հայկական բաժնում` 120: Մեզ հետ զրույցում դպրոցի հայկական բաժանմունքի ուսմասվար Հասմիկ Պապիկյանն ընդգծեց, որ մինչեւ նոր շենքի շահագործումը, առաջացած դժվարությունների պատճառով, մասնաճյուղից մոտ հարյուր աշակերտ տարբեր դպրոցներ էին տեղափոխվել, որոնցից շատերն արդեն ետ են վերադառնում:

Դպրոցի վերաբացման միջոցառման շրջանակներում, դպրոցի տնօրինության եւ Վրաստանի վոլեյբոլի ֆեդերացիայի միջեւ կնքվեց համագործակցության հուշագիր:

***ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ***

***Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության ազգային ուսումնական ծրագրերի վարչության ոչ վրացալեզու դպրոցներում ուսումնական նյութերի ներդրման փորձագետ***

ՀԱՐՑՈՒՄ

# ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵՑԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԻ ՈՐՈՇԱԿԻ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ

ԱՄՆ-ի Ազգային ժողովրդավարական ինստիտուտը (NDI) հրապարակեց Վրաստանի ողջ մասշտաբով անցյալ տարվա նոյեմբերի 4-ից մինչեւ դեկտեմբերի 4-ը անցկացված հասարակական հարցման հերթական արդյունքները: Հարցմանը մասնակցել է ավելի քան 3 հազար մարդ:

## ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԿԱՐԾԻՔ Է «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԻ» ՀԵՏ

ԱՄՆ-ի Ազգային ժողովրդավարական ինստիտուտի (NDI) հարցման արդյունքները վկայում են, որ մեծամասնության (40 տոկոս) հայացքներին առավել մոտ «Վրացական երազանքի» դիրքորոշումն է, 22 տոկոսը գտնում է, որ կուսակցություններից եւ ոչ մեկի դրքորոշումը չի համապատասխանում իրենց հայացքներին: 10 տոկոսի հավաստմամբ, իրենց հայացքները որոշակիորեն արտահայտում է «Միասնական ազգային շարժումը», իսկ 3 տոկոսը գտնում է, որ դիրքորոշմամբ ավելի մոտ են «Հայրենասերների ալյանսը» եւ «Ազատ ժողովրդավարները»:

## ՎՐԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԵՆ ԵՄ-ԻՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ

NDI-ի հարցման տվյալներով, Վրաստանի քաղաքացիների կեսից ավելին կարծում է, որ երկիրը պետք է ունենա արեւմտամետ արտաքին քաղաքականություն, բայց միեւնույն ժամանակ լավ հարաբերություններ պահպանի ՌԴ-ի հետ:

Հարցման արդյունքների համաձայն, մասնակիցների 54 տոկոսը հանդես է եկել արտաքին քաղաքականության արեւմտամետ ուղեգծի օգտին` ՌԴ-ի հետ լավ հարաբերությունների պահպանմամբ: Նշենք, որ 2016 թվականի հուլիսին այդ հարցին դրականորեն էր պատասխանել հարցման մասնակիցների 48 տոկոսը: Դրա հետ մեկտեղ, 12 տոկոսը պաշտպանել էր բացառապես արեւմտամետ, իսկ 9 տոկոսը` բացառապես ռուսամետ քաղաքականությունը:

Հարցվածների 53 տոկոսի կարծիքով, Վրաստանին օգուտ կբերի ԵՄ-ին եւ ՆԱՏՕ-ին անդամակցությունը: Իսկ 31 տոկոսն այն կարծիքն է հայտնել, որ երկիրը կշահի Ռուսաստանի հետ հարաբերությունների կարգավորումից:

## 2012 ԵՒ 2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ ՉԻ ԳՈՐԾԱԴՐՎԵԼ

Հարցման տվյալներով, մեծամասնությունը` 43 տոկոսը, գտնում է, որ ո'չ 2012 եւ ո'չ 2016 թվականի խորհրդարանական ընտրություններին բռնություն չի գործադրվել, 18 տոկոսի համոզմամբ, 2012-ի ընտրություններին բռնության փաստերը ավելի շատ էին, քան 2016-ի խորհրդարանական ընտրություններին, իսկ 12 տոկոսը հակառակ կարծիքին է: Եվս 12 տոկոսի կարծիքով, այդ երկու ընտրություններին բռնության մակարդակը նույնն է եղել:

## ՀԱՐՑՄԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾՆԵՐԻ 33 ՏՈԿՈՍԸ ՉԳԻՏԻ, ԹԵ ՈՎ Է ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԸ

NDI-ի հարցին, թե ո՞վ է խորհրդարանում ձեր մեծամասնական պատգամավորը, հարցման ենթարկվածների 65 տոկոսը, ովքեր հոկտեմբերի 8-ին մասնակցել են խորհրդարանական ընտրություններին, ստույգ պատասխանեց, 8 տոկոսը հարցին սխալ պատասխանեց, իսկ 25 տոկոսը ընդհանրապես դրա մասին տեղյակ չէր:

## ՀԱՄՈԶՎԱԾ ԵՆ, ՈՐ ՆԵՐԿԱՅԻՍ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԱՎԵԼԻ ԼԱՎ ԿԱՇԽԱՏԻ

Վրաստանի մասշտաբով անցկացված հարցման արդյունքներով, 42 տոկոսը գտնում է, որ նորընտիր խորհրդարանը, նախորդ գումարման խորհրդարանից ավելի լավ կաշխատի, 30 տոկոսի կարծիքով, ներկայիս եւ նախորդի աշխատանքներում տարբերություն չի լինի, իսկ 8 տոկոսի հավաստմամբ, 9-րդ գումարման խորհրդարանը նախորդից շատ ավելի վատ կաշխատի:

ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

# ԼՈՒՐՋ ԻՐԱՐԱՆՑՄԱՆ ՊԱՏՃԱՌ ՎԵՐԱԾՎԱԾ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ

*Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի կառավարության եւ ռուսական «Գազպրոմ էքսպորտ» ընկերության միջեւ բանակցություններ էին տարվում Վրաստանի տարածքով Հայաստան բնական գազի տարանցման վճարման կարգի մասին: Հիշեցնենք, որ, մինչ այդ, տարիներ շարունակ տարանցվող գազի դիմաց, Վրաստանը ստանում էր ողջ ծավալի 10 տոկոսը:*

Դեռեւս անցյալ տարի ռուսական կողմը բարձրացրեց տարանցիկության համար փողով ֆիքսացված գումար վճարելու հարցը: Բանակցային տեւական գործընթացի արդյունքում, վրացական կողմը որոշում ընդունեց համաձայնել «Գազպրոմ էքսպորտ»-ի առաջարկությանը եւ Ռուսաստանից Հայաստան «երկնագույն վառելիքի» տարանցման դիմաց վճարումն ստանալ փողով, այլ ոչ թե գազով: Բացի այդ, պայմանավորվածության համաձայն, Վրաստանը, անհրաժեշտության դեպքում, Ռուսաստանից գազը կստանա հազար խորանարդ մետրի դիմաց ոչ թե 215, այլ` 185 դոլարով:

Սույն պայմանավորվածությունը լայն արձագանք առաջացրեց երկրում: Պայմանավորվածության կապակցությամբ արտահայտվեցին ծայրահեղորեն տարբերվող կարծիքներ: Մասնավորապես, ոչ կառավարական կազմակերպությունները փորձում են ստույգ տեղեկատվություն ստանալ այն մասին, թե տվյալ պարագայում որքան է ստանալու Վրաստանը: Կառավարության հավաստմամբ, «Գազպրոմը» գազի տարանցման համար Վրաստանին վճարելու է ամենաբարձր գինը եվրոպական երկրների միջեւ (նշենք, որ յուարաքանչյուր հարյուր կիլոմետրի վրա տարանցված հազար խորանարդ մետրի դիմաց Դանիան ստանում է 13, իսկ Ուկրաինան` 7 ԱՄՆ դոլար): Փորձագետների հաշվարկներով, Ռուսաստանից Վրաստանի տարածքով անցնող գազամուղի երկարությունը կազմում է 221 կմ եւ երկրի տարեկան եկամուտը կազմելու է շուրջ 57 միլիոն ԱՄՆ դոլար:

Վրաստանի էներգետիկայի նախկին նախարար Դավիթ Միրցխուլավայի խոսքով, ֆինանսա-տնտեսական տեսանկյունից, այդ պայմանավորվածությունը շահավետ չէ, եւ նախարարությունը դա խոստովանում է:

- Առավել շահավետ, ինչպես ֆինանսական, այնպես էլ` տնտեսական տեսանկյունից, 2003 թվականի պայմանագիրն էր, ըստ որի, մենք վճարը ստանում էինք ընդհանուր ծավալի 10 տոկոսի տեսքով: Սակայն, վրացական կողմը պետք է ամեն ինչ աներ, որպեսզի գտներ հիմնախնդրի օպտիմալ լուծումը եւ խուսափեր գազի հարցով Ռուսաստանի հետ հարաբերությունների բարդացմանը` Ուկրաինայի օրինակով,- հայտարարեց Դավիթ Միրցխուլավան:

Նրա խոսքով, նախորդ տարիների համեմատությամբ, Ռուսաստանն ուներ մի լծակ, որից մինչ այդ չէր օգտվում: Հենց 2016 թվականին իրականացված վերակառուցումից հետո, նրանք այլընտրանքի կարգով կարողացան Իրանից գազատար անցկացնել Հայաստան:

- Եթե հաշվի առնենք այն, որ մեր գազատարով Հայաստան է ներտարվում 2,4 միլիարդ խորանարդ մետր բնական գազ, եւ հիմա Իրանից էլ պատկառելի ծավալ է ներկրվում, ապա պարզ է, որ մեր եկամուտները զգալիորեն կպակասեն,- նշեց նախկին նախարարը:

Դավիթ Միրցխուլավայի հավաստմամբ, տվյալ պարագայում կառավարությունը նախընտրել է չարյաց փոքրագույնը, ինչը որոշակիորեն երաշխավորում է երկրի էներգետիկական անվտանգությունը:

Արձագանքելով պայմանավորվածության վերաբերյալ դիրքորոշումների տարբերության թեմային` Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին հայտարարեց, որ երկրի կառավարությունը հնարավոր ամեն ինչ արեց երկրի շահերի պաշտպանության համար եւ հասավ առավելագույն արդյունքին, որին հնարավոր էր հասնել տվյալ պայմաններում:



- Ուրիշներից ոչ պակաս է ցավում մեր սիրտը երկրի համար, սակայն ի տարբերություն ուրիշների, պատասխանատվություն ենք կրում երկրի առջեւ,- հայտարարեց վարչապետը եւ հավելեց, որ «Գազպրոմի» հետ պայմանագիրը կհրապարակվի, քանի որ մենք բնակչությունից ոչինչ թաքցնելու մտադրություն չունենք:

Նշենք, որ ընդդիմադիր կուսակցությունները` ոչ կառավարական կազմակերպությունների մեծամասնությունը, կառավարությունից պահանջում են վերոնշյալ պայմանավորվածության մանրամասների հրատարակումը` նշելով, որ միայն դրանից հետո կարող են հստակ կարծիք կազմել հետեւանքների եւ հնարավոր ռիսկերի մասին: